Aim: Discover the historical and cultural sights of Armenia, promote the physical health of young people through cognitive hikings.

Description: "Youth Initiative Centre" (YIC) NGO regularly organizes awareness campaigns the purpose of which is to reveal the historical and cultural heritage and attractions of Armenia. With a well-planned route and a great team, hiking events become an unforgettable experience for all participants giving them the opportunity to make new connections.

During 2022, YIC initiated 1 hike to Lori: Dendropark, St. Nicholas the Wonderworker Church and Horomayr Monastery, in which 32 hikers participated.



Երբ. հունվար - դեկտեմբեր 2022 թ.

Որտեղ. Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Լեհաստան, Խորվաթիա, Իսպանիա, Իտալիա, Սլովակիա, Գերմանիա, Հունգարիա, Լիտվա և Ֆինլանդիա

Նկարագրություն. 2022 թվականին ԵՆԿ ՀԿ-ն, ընդլայնելով համագործակցությունը տարբեր միջազգային գործընկերների հետ, Եվրոպական միության Էրազմուս+ ծրագրի շրջանակներում երիտասարդների, երիտասարդական աշխատողների և որոշում կայացնողների կարողությունների զարգացման տարբեր հնարավորություններ է ընձեռել Հայաստանից և Արցախից 102 անհատի: Ծրագրերը տեղի են ունեցել Եվրոպական միության և Արևելյան գործընկերության երկրներում: 2022 թվականին ԵՆԿ ՀԿ-ն հյուրընկալել է նաև 1 միջազգային շարժունակության ծրագիր Հայաստանում, որին մասնակցել է 5 երիտասարդական ոլորտի ներկայացուցիչ Հայաստանից և 32-ը՝ 15 այլ երկրներից:

Իրականացված ծրագրերը ներառել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են երիտասարդական աշխատանքը, հոգեկան առողջությունը, մշակույթն ու արվեստը, մարդու իրավունքները, խաղաղաշինությունը, թվային և մեդիա գրագիտությունը, ներառականությունը, ձեռնարկատիրությունը և այլն:

When: January - December 2022

Where: Armenia, Georgia, Ukraine, Poland, Croatia, Spain, Italy, Slovakia, Germany, Hungary, Lithuania and Finland

Description: In 2022, YIC NGO expanded the cooperation with various international partners by providing a wide range of capacity development opportunities to young people, youth workers and decision-makers from Armenia and Artsakh. In the result, 102 individuals from the mentioned groups had the chance of participating in mobility projects within the framework of the Erasmus+ programme of the European Union. The projects took place mainly in the European Union and the Eastern Partnership countries. In 2022, YIC NGO also hosted 1 international mobility project in Armenia, which was attended by 5 youth sector representatives from Armenia and 32 from 15 other countries.

These projects covered such topics as youth work, mental health, culture and arts, human rights, peacebuilding, digital and media literacy, inclusion, entrepreneurship, and more.



**Շարժունակության ծրագրերի թիվը
Հայաստանում**
Number of mobility projects in
Armenia:

1

**Հյուրընկալած
մասնակիցներ**
Hosting



ՀՀ-ԻՑ
LOCAL



ԱՐՏԵՐԿՐԻՑ
INTERNATIONAL

**Շարժունակության ծրագրերի թիվը
Հայաստանից դուրս**
Number of mobility projects outside
Armenia:

31

**Ուղարկած
մասնակիցներ**
Sending



«ԵՄ-ն հանուն կանանց և տղամարդկանց իրավահավասարության, միասին ընդդեմ գենդերային կարծրատիպերի»

”EU4GENDER EQUALITY: together against gender stereotypes and gender-based violence” programme

Երբ. օգոստոս 2020 թ. - հունիս 2023 թ.

Որտեղ. Շիրակ, Լոռի, Տավուշ, Հայաստան

Նպատակ. ամրապնդել կանանց և տղամարդկանց հավասար իրավունքներն ու հնարավորությունները՝ կանանց ու տղամարդկանց դերերի հանրային ընկալումները փոխելու, գենդերային կարծրատիպերը հաղթահարելու, երեխաների խնամքի, ծնողավարության մեջ տղամարդկանց մասնակցությունը խթանելու միջոցով:

Նկարագրություն. Եռամյա ծրագիր է, որը Եվրոպական միության ֆինանսավորմամբ իրականացվում է ՄԱԿ-ի Բնակչության հիմնադրամի և «ՄԱԿ Կանայք» կազմակերպության կողմից Արևելյան Եվրոպայի վեց երկրներում՝ Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Վրաստան, Մոլդովա, Ուկրաինա:

«Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում ծրագիրն իրականացնող հիմնական գործընկերներից է:

Ծրագրի շրջանակներում ԵՄ 3 թիրախային մարզերում հիմնվել են «Ընտանիքի անկյուն» ռեսուրսային կենտրոններ, որոնք նյութատեխնիկապես հագեցած և կահավորված տարածքներ են, որտեղ անցկացվում են դասընթացներ, թեմատիկ հանդիպում-քննարկումներ և միջոցառումներ՝ ուղղված կանանց ու տղամարդկանց դերերի վերաբերյալ կարծրատիպերի փոփոխմանը, երեխայի խնամքի ու ծնողավարման մեջ տղամարդկանց ներգրավվածության մեծացմանը:

Ծրագրի շահառուներն են Շիրակի, Լոռու և Տավուշի մարզերի 18-40 տարեկան երիտասարդ տղամարդիկ և կանայք, հայրիկներն ու մայրիկները:

2022 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում իրականացվել են.

- 11 դասընթաց Հայրիկների դպրոց հանդիպում- քննարկումների շրջանակներում (թեմաներ՝ «Ընտանիքի պլանավորում», «Զույգերի հաղորդակցություն», «Հոր ազդեցությունը», «Հղիություն», «Ծնունդ», «Երեխայի խնամք և խնամքի բաշխում», «Երեխայի կարիքներն և իրավունքները»), որոնց մասնակցել են 18-40 տարեկան 174

When: August 2020 - June 2023

Where: Shirak, Lori, Tavush, Armenia

Aim: To strengthen equal rights and opportunities for women and men through shifting social perceptions around gender roles, tackling gender stereotypes and increasing men’s participation in childcare and other domestic responsibilities.

Description: This is a three-year programme founded by the European Union and implemented jointly by UNFPA and UN Women at regional and national levels in six EAP countries: Armenia, Azerbaijan, Belarus, Georgia, Moldova and Ukraine.

In Armenia, the “Youth Initiatives Center” NGO is one of the main implementing partners of the Programme.

Within the framework of the programme, in the EU 3 target regions, the “Family Corner” resource centres have been established, materially equipped and furnished spaces where training, thematic meeting discussions and events are held, aimed at changing stereotypes about the roles of women and men, increasing the involvement of men in child care and parenting.

The beneficiaries of the programme are 18-40 years old young men, women, fathers and mothers from 3 EU target regions: Shirak, Lori and Tavush.

During 2022, in the framework of the programme, the following activities have been implemented:

- 11 courses within the Papa School meeting discussions (Topics: "Family Planning", "Couples Communication", "Father's Impact", "Pregnancy", "Birth", "Child Care and Division of Caregiving", "The needs and right of children"), attended by 174 young people aged 18-40: men and women, fathers and mothers;
- A series of 2 two-month parenting courses successfully completed by 35 young people aged 18-40: men and women, fathers and mothers;
- 7 thematic meetings, attended by 101 young people aged 18-40: men and women, fathers and mothers;
- 4 public events (official opening of the Ijevan "Family Corner", International Family Day, International Father's Day, International Men's Day), attended by

- երիտասարդներ՝ տղամարդիկ և կանայք, հայրիկներ և մայրիկներ,
- 2 ծնողավարության երկամսյա դասընթացների շարք, որոնք հաջողությամբ ավարտել են 18-40 տարեկան 35 երիտասարդներ՝ տղամարդիկ և կանայք, հայրիկներ և մայրիկներ,
 - 7 թեմատիկ հանդիպումներ, որոնց մասնակցել են 18-40 տարեկան 101 երիտասարդներ՝ տղամարդիկ և կանայք, հայրիկներ և մայրիկներ,
 - 4 հանրային միջոցառումներ (Իջևանի «Ընտանիքի անկյան» պաշտոնական բացում, Ընտանիքի միջազգային օր, Հայրիկների միջազգային օր, Տղամարդկանց միջազգային օր), որոնց մասնակցել են 18-40 տարեկան 243 երիտասարդներ՝ տղամարդիկ և կանայք, հայրիկներ և մայրիկներ,
 - Շահագրգիռ կողմերի ներկայացուցիչների մասնակցությամբ ուսումնական այց Շվեդիա՝ նախաձեռնության խնամքում տղամարդկանց ներգրավման և պատասխանատու ծնողավարման լավագույն փորձ ունեցող երկիր՝ հետազայում մոդելը համապատասխանեցնելու և Հայաստանում կիրառելու նպատակով:

- 243 young people aged 18-40: men and women, fathers and mothers;
- The study visit with stakeholder representatives to a country with a good experience aiming to promote men's engagement in antenatal care and experiencing the best practices with Papa Schools to adapt and implement the model later in Armenia.



ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿ

STRATEGIC AIM

2

**ՆՊԱՍՏԵԼ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ
ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆԸ**

**CONTRIBUTE TO THE IMPROVEMENT OF THE
SOCIAL-ECONOMIC CONDITIONS FOR THE YOUTH**

ԽՆԴԻՐՆԵՐ

- 2.1. Բարձրացնել երիտասարդների մրցունակությունն աշխատաշուկայում:
- 2.2. Աջակցել երիտասարդների ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանը և իրացմանը:
- 2.3. Խթանել երիտասարդների նախաձեռնողականությունը:
- 2.4. Զարգացնել կամավորության մշակույթը երիտասարդության շրջանում:

OBJECTIVES

- 2.1. To develop a culture of volunteerism among young people.
- 2.2. To increase the competitiveness of young people in the labour market.
- 2.3. To support the development and realization of youth entrepreneurial skills.
- 2.4. To promote the spirit of initiative among the youth.

«Բացահայտիր Կովկասը»

Երբ. 01 սեպտեմբերի 2022 թ. - 31 օգոստոսի 2023 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Նպաստել երիտասարդների ինքնազարգացմանը և բարձրացնել վերջիններիս դերը հասարակության մեջ՝ հավասարը հավասարին ուսուցման և ոչ-ֆորմալ կրթական գործունեության միջոցով:

Կամավորի անունը. Նիլս Ֆրեդրիխ (Գերմանիա)

Նկարագրություն. Պլանավորել, նախապատրաստել և անցկացնել գերմաներեն լեզվի դասեր «Գյումրու երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնում և տեղի դպրոցներում, ոչ-ֆորմալ կրթական մեթոդներով անգլերեն դասավանդել տեղի մանկապարտեզում, իրականացնել «Եվրոպական ակումբ» ԵՅԿ ՀԿ-ի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների սաների համար, կազմակերպել կամավորությունը խթանող միջոցառումներ, ինչպես նաև ներկայացնել իր երկրի մշակույթը, ուտեստները, պարերը և սովորույթները:



“Discover the Caucasus”

When: 01 September 2022 - 31 August 2023

Where: Gyumri, Armenia

Aim: To ensure the self-development of young people and empower them to play an active role in the society through peer-to-peer learning and non-formal educational activities.

Volunteer Name: Nils Friedrich (Germany)

Description: To plan, prepare and run the German language classes in “Gyumri Youth House” open youth centre and at local schools, to teach English at the kindergarten with non-formal educational methods, run a “European Club” for the beneficiaries of “Youth House” open youth centres of YIC, to organize promotional activities about volunteering and present the culture, food, dances and traditions of his country.



«EUROBACKYARDS II»

Երբ. 19 հուլիսի - 4 սեպտեմբերի 2022 թ.

Որտեղ. Բիդգոշ, Լեհաստան

Հյուրընկալող կազմակերպություն. Fundacja “Wiatrak”

Նպատակ. Բարձրացնել տեղացի երեխաների և երիտասարդների միջմշակութային իրազեկվածությունը՝ տարատեսակ մշակութային միջոցառումների և խաղերի կազմակերպման միջոցով:

Կամավորի անունը. Նարե Ծատուրյան

Նկարագրություն. Կազմակերպել բացօթյա խաղեր և մրցույթներ մասնակիցների համար՝ խրախուսելով տեղացի երեխաներին ակտիվորեն անցկացնել իրենց ազատ ժամանակը միասին, ինչպես նաև ծանոթանալ այլ մշակույթներին և բարելավել անգլերենի և լեհերենի իմացությունը:



«EUROBACKYARDS II»

When: 19 July - 04 September 2022

Where: Bydgoszcz, Poland

Hosting organization: Fundacja “Wiatrak”

Aim: To raise the intercultural awareness of local children and youth through organizing various cultural events and games.

Volunteer Name: Nare Tsaturyan

Description: To organize different games encouraging local youngsters to actively spend their free time together, learn about other cultures and improve their knowledge of English and Polish.



«Կանաչապատի քո համայնքը»

Երբ. 01 օգոստոսի 2022 թ. - 31 հուլիսի 2023 թ.

Որտեղ. Տրամոնտի, Իտալիա

Հյուրընկալող կազմակերպություն. Associazione Costiera Amalfitana Riserva Biosfera (ACARBIO)

Նպատակ. Միանալ տեղական համայնքին, իրականացնել կայուն զարգացման ուղղված գործունեություն, ինչպես նաև բարելավել լեզվական կարողությունները և ստեղծել եվրոպական համագործակցության ցանց:

Կամավորի անունը. Մարիամ Հովհաննիսյան, Սերյոժա Գրիգորյան

Նկարագրություն. Իրականացնել տարաբնույթ աշխատարաններ, դասընթացներ տեղացիների համար՝ կայուն և համաչափ ապրելակերպի վերաբերյալ, երիտասարդների համար կազմակերպել անգլերեն լեզվի դասընթացներ, ինչպես նաև համատեղ ուժերով զբաղվել հարակից կանաչապատ տարածքների մաքրությամբ:



“GREEN UP YOUR COMMUNITY”

When: 01 August 2022 - 31 July 2023

Where: Tramonti, Italy

Hosting organization: Associazione Costiera Amalfitana Riserva Biosfera (ACARBIO)

Aim: To join the local community, carry out sustainable development activities, as well as improve language skills and build a European network.

Volunteer Name: Mariam Hovhannisyanyan, Seryozha Grigoryan

Description: To implement various workshops, trainings for the locals about sustainable and green way of life, to teach the English language to the youngsters, as well as to be engaged in the cleaning activities of adjacent green areas together.



«Կամավորություն՝ հանուն միջմշակութային քաղաքացիության»

Երբ. 01 ապրիլի 2022 թ. - 28 փետրվարի 2023 թ.

Որտեղ. Սևիլյա, Իսպանիա

Հյուրընկալող կազմակերպություն. Fundación Sevilla Acoge

Նպատակ. Բարձրացնել տեղի երիտասարդների աշխատունակությունը, իրազեկվածության մակարդակը, վերջիններիս ինքնավստահությունը և բարելավել լեզվական հմտությունները:

Կամավորի անունը. Մարիամ Սուքիասյան

Նկարագրություն. Աջակցել տեղեկատվական հանդիպումների, դասընթացների և աշխատարանների կազմակերպման գործընթացին, սոցիալական հարթակներում տեղեկատվության տարածման համար պատրաստել համապատասխան նյութեր:

“Volunteering for an intercultural citizenship”

When: 01 April 2022 - 28 February 2023

Where: Seville, Spain

Hosting organization: Fundación Sevilla Acoge

Aim: To raise awareness, employability and self-confidence of young people and improve their language skills.

Volunteer Name: Mariam Sukiasyan

Description: To assist in implementation of information activities, trainings and workshops, to prepare texts and images about certain activities and dissemination in social networks.



«Կամավորություն Լասնամյայե և Հաբերսթի երիտասարդական կենտրոններում»

Երբ. 11 հոկտեմբերի 2022 թ. – 31 օգոստոսի 2023 թ.

Որտեղ. Տալին, Էստոնիա

Հյուրընկալող կազմակերպություն. «Lasnamäe Noortekeskus», «Haabersti Vaba Aja Keskus» երիտասարդական կենտրոններ

Նպատակ. Նպաստել երիտասարդների միջմշակութային իրազեկվածության բարձրացմանը ոչ-ֆորմալ մեթոդների կիրառման միջոցով, աջակցել երիտասարդական կենտրոններում երիտասարդների համար մի շարք միջոցառումների և աշխատարանների կազմակերպմանը:

Կամավորի անունը. Լիլիթ Ղուկասյան, Գագիկ Գրիգորյան

Նկարագրություն. Աջակցել երիտասարդների ժամանցի, տարբեր խաղերի և միջոցառումների կազմակերպմանը երիտասարդական կենտրոններում, անցկացնել հայկական մշակույթի երեկոներ, կազմակերպել հայկական ավանդական ուտեստների պատրաստման օրեր, վարել անգլերենի խոսակցական և ճապոներենի սկսնակ մակարդակի ակումբներ:



“Volunteer in Lasnamäe and Haabersti Youth Centres”

When: 11 October 2022 - 31 August 2023

Where: Tallinn, Estonia

Hosting organization: “Lasnamäe Noortekeskus”, “Haabersti Vaba Aja Keskus” youth centres

Aim: To contribute to several activities, such as working in the open youth centre area, organizing events, workshops and other activities for youth, promote the intercultural awareness of young people through the use of non-formal methods.

Volunteer Name: Lilit Chukasyan, Gagik Grigoryan

Description: To assist in organizing free time activities, various games and events for the youngsters in the youth centres, to hold Armenian cultural events and to cook Armenian traditional dishes, to run English conversational and Japanese clubs for beginners.



Նկարագրություն. «Մարդասիրական կամավորություն» ծրագիրն իրականացվում է Եվրամիության Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրի շրջանակներում:

Ծրագիրը հնարավորություն է տալիս 18-ից 35 տարեկան երիտասարդներին իրենց ներդրումն ունենալ հասարակության զարգացման մեջ՝ կարճաժամկետ կամ երկարաժամկետ կամավորական գործունեության միջոցով, որոնք ուղղված են կարիքավոր մարդկանց կենսապայմանների բարելավմանը:

Այս ծրագրերը պետք է համահունչ լինեն մարդասիրական օգնության՝ մարդասիրության, չեզոքության, անկողմնակալության և անկախության սկզբունքներին, ինչպես նաև «մի վնասիր» սկզբունքին:

Description: Humanitarian Aid Volunteering is a volunteering programme in the frames of European Solidarity Corps programme of EU.

The programme gives an opportunity to young people aged 18 to 35 years old to contribute to society by short-term or long-term volunteering activities aimed at improving living conditions of people in need.

These projects must be in line with the humanitarian aid principles of humanity, neutrality, impartiality and independence, as well as with the 'do no harm' principle.



«Կայուն զարգացում՝ մարդասիրական կամավորության միջոցով»

Երբ. 16 ապրիլի - 15 նոյեմբերի 2022 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Խթանել կամավորությունը, իրականացնել առողջապահական ոլորտին վերաբերող դասընթացներ՝ նպաստելով երիտասարդների հզորացմանը և ինքնազարգացմանը:

Կամավորի անունը. Ալբա Իգլեսիաս (Իսպանիա)

Նկարագրություն. «Կայուն զարգացում՝ մարդասիրական կամավորության միջոցով» ծրագրի շրջանակներում կամավորն իրականացրել է մի շարք վերապատրաստումներ և աշխատարաններ Գյումրու, Սպիտակի և Էջմիածնի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների երիտասարդական աշխատողների և կենտրոնների շահառուների համար՝ հանրային առողջության ոլորտում: Վերապատրաստումների թեմաներն էին «Առաջին օգնություն», «Առողջ սնունդ», «Դրական և ապահով հարաբերություններ», «Հիգիենա» և «Առողջ ապրելակերպ»:

Կամավորի կողմից մշակվել է նաև հանրային առողջության վերաբերյալ վերապատրաստումների ուղեցույց, որը կազմակերպության աշխատակազմին և ապագա հյուրընկալվող կամավորներին հնարավորություն կտա իրականացնել վերոնշյալ թեմաներով վերապատրաստումներ ու աշխատարաններ:



“SUDHAV3 - Sustainable Development through Humanitarian Aid Volunteering”

When: 16 April - 15 November 2022

Where: Gyumri, Armenia

Aim: To promote volunteerism, to carry out activities related to the health sector, contributing to the empowerment and self-development of young people.

Volunteer Name: Alba Iglesias (Spain)

Description: In the frames of the project “SUDHAV3 - Sustainable Development through Humanitarian Aid Volunteering” the volunteer conducted various trainings and workshops with the youth workers and beneficiaries of Gyumri, Spitak and Ejmiatsin “Youth House” open youth centres in the field of public health. The topics of the trainings covered “First aid”, “Nutrition”, “Positive and secure relationships”, “Hygiene” and “Healthy lifestyle”.

The volunteer also developed a guide on public health to equip the future volunteer(s) and current team of the organisation with the needed information and methods to continue running the activities developed by her.



«Կայուն զարգացում՝ մարդասիրական կամավորության միջոցով»

Երբ. 12 հուլիսի - 05 դեկտեմբերի 2022 թ.

Որտեղ. Չայաստան, Գյումրի

Նպատակ. Խթանել կամավորությունը, աջակցել կազմակերպության սոցիալական ձեռնարկատիրության ոլորտի ծրագրերի իրականացմանը՝ նպաստելով երիտասարդների հզորացմանը և ինքնազարգացմանը:

Կամավորի անունը. Ադրիանա Չիգաշովա (Սլովակիա)

Նկարագրություն. «Կայուն զարգացում՝ մարդասիրական կամավորության միջոցով» ծրագրի շրջանակներում կամավորն իր գործունեությամբ նպաստել է կազմակերպության կազմակերպական զարգացմանը, մշակել ԵՆԿ ՅԿ-ի «ԲայքԼայֆ» ՍՁ-ի բիզնես պլանը և իրականացրել մի շարք վերապատրաստումներ ԵՆԿ գրասենյակի ու Գյումրու, Արմավիրի և Էջմիածնի «Երիտասարդների տուն» բաց երիտասարդական կենտրոնների աշխատակազմերի համար, ինչպես նաև վարել «Excel»-ի ակումբ ԵՆԿ ՅԿ-ի շահառուների համար:



“SUDHAV3 - Sustainable Development through Humanitarian Aid Volunteering”

When: 12 July - 05 December 2022

Where: Gyumri, Armenia

Aim: To promote volunteerism, support the implementation of the Organization’s social entrepreneurship programs, contributing to the empowerment and self-development of young people.

Volunteer Name: Adriána Cigášová (Slovakia)

Description: In the frames of the project “SUDHAV3 - Sustainable Development through Humanitarian Aid Volunteering” the volunteer contributed to the organizational development of YIC, developed the business plan for “Bike-Life” social enterprise of the organisation and conducted capacity building trainings for the staff members of YIC office and Gyumri, Armavir, Ejmiatsin “Youth House” open youth centres. The volunteer also ran an “Excel” club for the beneficiaries of the organization.



«ԵՅԿ Մենթորների մեկօրյա ներածական դասընթաց»

Երբ. 26 նոյեմբերի 2022 թ.

Որտեղ. Գյումրի, Հայաստան

Նպատակ. Նպաստել Եվրոպական միության «Եվրոպական համերաշխության կորպուս» (ԵՅԿ) ծրագրի կամավորական ծրագրերում ներգրավված երիտասարդների գիտելիքների բարելավմանը, որը կնպաստի կամավորական ծրագրեր հյուրընկալող կազմակերպությունների ներուժի զարգացմանը և ԵՅԿ ծրագրերի որակի բարձրացմանը:

Նկարագրություն. Նոյեմբերի 26-ին «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Հայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի տեղեկատվական կենտրոն»-ի հետ համատեղ իրականացրեց Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրի մենթորների մեկօրյա ներածական դասընթաց: Դասընթացի շրջանակներում ՀՀ տարբեր համայնքների երիտասարդներ և երիտասարդական կառույցների ներկայացուցիչներ հնարավորություն ունեցան ավելի մասնրամասն ծանոթանալու «Եվրոպական համերաշխության կորպուսի» կամավորական ծրագրին, վերջինիս կողմից ընձեռվող հնարավորություններին, ինչպես նաև բացահայտեցին ԵՅԿ-ի կամավորներին աջակցելու և ուղղորդելու համար անհրաժեշտ կարևոր մեթոդներ, որոնք կօգնեն վերջիններիս կայանալ որպես որակյալ մենթորներ: Հանդիպման ավարտին ներկաներին հանձնվեցին վկայականներ:

“Local training for ESC Mentors”

When: 26 November 2022

Where: Gyumri, Armenia

Aim: To improve the knowledge of young people involved in ESC by contributing to the development of the potential of host organizations implementing ESC projects and increasing the quality of ESC projects.

Volunteer Name: Alba Iglesias (Spain)

Description: On the 26th of November “Youth Initiative Centre” NGO in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia held a 1-day introductory training course on ESC mentorship in Gyumri.

In the frames of the training course young people and representatives of youth organizations from different cities of Armenia had an opportunity to learn more about ESC, the opportunities the latter provides as well as to discover vital methods and tools to support and guide the volunteers towards the development of their competences.

The participants received certificates of participation at the end of the training.



«ԵՅԿ ծրագրերի աջակցման ծրագիր 2022»

Երբ. 01 հոկտեմբերի - 30 նոյեմբերի 2022 թ.

Որտեղ. Պրիշտինա, Կոսովո

Նպատակ. Նպաստել Արևմտյան Բալկաններում Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի քանակի ավելացմանը և նորաստեղծ կազմակերպությունների կարողությունների զարգացմանը՝ ի նպաստ որակյալ ծրագրերի իրականացման:

Նկարագրություն. «Երիտասարդական Նախաձեռնությունների կենտրոն» ՅԿ-ն՝ ՍՄԼՏՈ Երիտասարդություն Չարավ Արևելյան Եվրոպա ռեսուրսային կենտրոնի հետ համատեղ Չայաստանում «Erasmus+ Երիտասարդություն և Եվրոպական համերաշխության կորպուս ծրագրերի տեղեկատվական կենտրոն»-ի շրջանակներում իրականացրեց Եվրամիության «Եվրոպական համերաշխության կորպուս» ծրագրում նոր ներգրավված Կոսովոյի «Free Libre Open Source Software Kosova» կազմակերպության կարողությունների զարգացմանն ուղղված երկամսյա աջակցության ծրագիր: Ծրագրի շրջանակներում առցանց հանդիպումների միջոցով կազմակերպության ներկայացուցիչներին տրամադրվել է անհրաժեշտ տեղեկատվություն և խորհրդատվություն որակյալ ԵՅԿ ծրագրերի իրականացման, տարբեր գործընթացների և պրակտիկ հարցերի շուրջ, համատեղ մշակվել են կամավորական ծրագրերի կառավարման համար անհրաժեշտ փաստաթղթեր:

«ESC Buddy-Support System in 2022»

When: 01 October - 30 November 2022

Where: Pristina, Kosovo

Aim: To support quality and quantity of volunteering projects within the European Solidarity Corps programme in the Western Balkans and to contribute to the capacity building of the newcomer organizations.

Description: “Youth Initiative Centre” NGO in cooperation with SALTO YOUTH South East Europe Resource Centre implemented a 2-month long buddy-support capacity building project for the newcomer organization in ESC «Free Libre Open Source Software Kosova» from Kosovo in the frames of the Info Centre for Erasmus+ Youth and European Solidarity Corps Programmes in Armenia.

Through online meetings the necessary support and consultancy was provided to the representatives of the organization on quality implementation of ESC projects, its procedures and practical questions, as well as necessary documents for volunteering management were developed.

«C.O.A.C.H» Մասնագիտական ուղղորդում՝ հանուն համայնքային բարեկեցության

Երբ. հուլիս 2019 թ. – հունիս 2022 թ.

Որտեղ. Հայաստան, Չեխիա, Իտալիա, Ավստրիա, Էստոնիա

Նպատակ. Երիտասարդական աշխատողներին և երիտասարդական կառույցներին զինել քուչինգի հմտություններով, որպեսզի վերջիններս էլ այդ մեթոդներով հզորացնեն և աջակցեն երիտասարդներին իրենց նպատակների սահմանման և մասնագիտական կողմնորոշման հարցում:

Նկարագրություն. «Մասնագիտական ուղղորդում՝ հանուն համայնքային բարեկեցության» (C.O.A.C.H) երկարաժամկետ ծրագիրն իրականացվել է «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից (Հայաստան)՝ «The Globe» (Չեխիա), «Associazione Culturale Strauss» (Իտալիա), «Cobra - cooperativa braccianti» (Ավստրիա) և «MITTETU-LUNDUSÜHING NOORED UHISKONNA HEAKS» (Էստոնիա) կազմակերպությունների հետ համատեղ: Էրազմուս+ ծրագրի «Համագործակցություն՝ նորարարության, լավագույն փորձի փոխանակման համար՝ «Ռազմավարական գործընկերություն երիտասարդության ոլորտում» Գործողություն 2 ծրագրի շրջանակներում:

2022 թվականի ընթացքում ծրագրի շրջանակներում մշակվել են “Social Anthropological Assessment”, “Video Documentary”, “Basic Introduction to Youth Coaching”, “Coaching and Youth Career Guidance”, “Eco-Psychology in Youth Coaching”, “Online Coaching Tutorial” թեմաներով մտավոր արժեքներ, որոնք թարգմանվել են բոլոր գործընկեր երկրների լեզուներով:

Իրականացված ծրագրերը ներառել են այնպիսի թեմաներ, ինչպիսիք են երիտասարդական աշխատանքը, հոգեկան առողջությունը, մշակույթն ու արվեստը, մարդու իրավունքները, խաղաղաշինությունը, թվային և մեդիա գրագիտությունը, ներառականությունը, ձեռնարկատիրությունը և այլն:

“C.O.A.C.H” – Career Orientation Aimed at Community Happiness

When: July 2019 – June 2022

Where: Armenia, Czech Republic, Italy, Austria, Estonia

Aim: To equip youth workers and youth organizations with coaching competencies so that they will in turn use them to empower and support young people in goal setting and career guidance.

Description: In 2022, YIC NGO expanded the cooperation with various international partners by providing a wide range of capacity development opportunities to young people, youth workers and decision-makers from Armenia and Artsakh. In the result, 102 individuals from the mentioned groups had the chance of participating in mobility projects within the framework of the Erasmus+ programme of the European Union. The projects took place mainly in the European Union and the Eastern Partnership countries. In 2022, YIC NGO also hosted 1 international mobility project in Armenia, which was attended by 5 youth sector representatives from Armenia and 32 from 15 other countries.

These projects covered such topics as youth work, mental health, culture and arts, human rights, peacebuilding, digital and media literacy, inclusion, entrepreneurship, and more.



«Երիտասարդների քաղաք. զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործընթացում երիտասարդների դերի բարձրացում»

“Cities of YOUth: increasing the role of young people in the development of tourism infrastructure”

Երբ. դեկտեմբեր 2019 թ. – փետրվար 2022 թ.

Որտեղ. Հայաստան, Վրաստան, Ուկրաինա, Խորվաթիա և Չեխիա

Նպատակ. Բարձրացնել երիտասարդների դերը և ներգրավվածությունն իրենց համայնքների հզորացման գործում՝ զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման գործընթացներում նրանց ակտիվորեն ներգրավելու միջոցով:

Նկարագրություն. Ծրագիրն արդյունք է եղել 5 երկրներից երիտասարդակենտրոն կազմակերպությունների միջև համագործակցության, որոնք պատրաստակամություն են հայտնել տրամադրել երիտասարդներին ուսուցման և ինքադրսևորման հեռանկարներ: Ծրագիրն իրականացվել է Եվրոպական միության «Էրազմուս+» ծրագրի երիտասարդական ոլորտում կարողությունների զարգացման 2-րդ գործողության շրջանակներում՝ «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից՝ վրացական «Դրոնի» երիտասարդական ասոցիացիայի, ուկրաինական «Եվրոպական նախաձեռնությունների կենտրոն», չեխական «Գլոբ» և խորվաթական «ԼԱԳ Վալլիս Կոլապիս» հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

2022 թվականին ծրագիրն ամփոփվեց Գյումրիում փետրվարի 4-ին տեղի ունեցած միջազգային համաժողովի շուրջ, որի նպատակն էր կիսել ծրագրի արդյունքները և լավագույն փորձը:

Միջոցառմանը մասնակցում էին ծրագրի 20 մասնակից 5 երկրից՝ ներառյալ երիտասարդ շահառուները և երիտասարդական աշխատողները, ինչպես նաև 50 տեղացի հյուրեր՝ ներառյալ տեղական և մարզային իշխանության, ՀԿ-ների, միջազգային կազմակերպությունների, զբաղվածության գործակալությունների, երիտասարդ ձեռներեցների, տեղական ակտիվ երիտասարդների, լրատվամիջոցների և այլ շահագրգիռ կողմերի ներկայացուցիչներ: Միջոցառումը հնարավորություն տվեց տեղական և միջազգային մասնակիցներին՝ հանդիպելու միմյանց և կիսվելու փորձով և գաղափարներով, ընդլայնելու իրենց կապերը և հաստատելու գործընկերային հարաբերություններ:

Համաժողովին ներկա ՀՀ էկոնոմիկայի նախարարության Զբոսաշրջության կոմիտեի ղեկավար Սիսիան Պողոսյանը, Շիրակի մարզպետի տեղակալ Կարեն Մանուկյանը և Գյումրի համայնքի ղեկավարի

When: December 2019 - February 2022

Where: Armenia, Georgia, Ukraine, Croatia and Czech Republic

Aim: Enhance the role and involvement of young people in the build-up of their communities through actively engaging them in the development of tourism infrastructures.

Description: The project was a result of cooperation between youth-driven and youth-focused civil society organizations from five countries, which were committed to providing learning and self-realization prospects to young people. The project was implemented with the support of the European Commission under Erasmus+ programme KA2 Capacity Building in the field of youth by “Youth Initiative Centre” NGO (YIC) in Armenia, in cooperation with Youth Association DRONI in Georgia, Center for Euroinitiatives in Ukraine, The Globe in Czech Republic and Local Action Group (LAG) Vallis Colapis in Croatia.

The project summarized its results, intellectual outputs and good practices at an international conference held in Gyumri on February 4.

20 project participants from 5 countries including young beneficiaries and youth workers, as well as 50 local guests including but not limited to representatives from local and national government, NGOs, international organisations, employment agencies, young entrepreneurs, local active youth, media and other relevant stakeholders took part in the conference. The event created a momentum for the local and international participants to meet each other and share experiences and ideas, expand their contacts and establish partnerships.

The conference started with opening remarks from the head of the Tourism Committee of the Ministry of Economy of Armenia Sisian Boghossian, Deputy Governor of Shirak Region Karen Manukyan and Deputy Mayor of Gyumri Davit Arushanyan.

In the programme of the conference an engaging panel discussion with audience questions was held under the topic “Youth and Tourism: Impact of COVID-19” featuring Gayane Ayvazyan – Public Relations specialist from the Tourism Committee of Armenia, Yasha Solomonyan – Sustainable Business Development expert of UNDP Armenia and Director of Armenian Association of

տեղակալ Դավիթ Առուշանյանը:

Համաժողովի բաղադրիչներից էր «Երիտասարդությունը զբոսաշրջության ոլորտում. Քովիդ 19-ի ազդեցությունը» թեմայով պանելային քննարկումը, որին մասնակցում էին բանախոսներ Գայանե Այվազյանը՝ ՀՀ զբոսաշրջության կոմիտեի հանրային կապերի մասնագետ, Յաշա Սոլոմոնյանը՝ ՄԱԿ-ի Զարգացման ծրագրի հայաստանյան գրասենյակի բիզնեսի կայուն զարգացման փորձագետ, Պրոֆեսիոնալ զբոսավարների հայկական ասոցիացիայի տնօրեն, Ալեքսան Տեր-Մինասյանը՝ Բեռլին Արտ Յոթելի տնօրեն, Գերմանիայի պատվո հյուպատոս և զբոսաշրջության ոլորտի մասնագետ, Բրիգիտե Մելմաուեր-Լարխերը՝ Ավստրիական զարգացման գործակալության «EU-LEAD4Shirak» ծրագրի թիմի ղեկավար, և Արթուր Նաջարյանը՝ երիտասարդական ոլորտի փորձագետ և ԵՆԿ ՀԿ նախագահ: Քննարկումն ընթանում էր լսարանի հարցերով:

Համաժողովի երկրորդ հատվածում բոլոր 5 երկրների մասնակիցները հնարավորություն ունեցան ծրագրի արդյունքում յուրաքանչյուր երկրի մշակած 1 բիզնես գաղափար ներկայացնել հրավիրված ժյուրիին՝ ստանալով պրոֆեսիոնալ գնահատական և խորհրդատվություն:

Ծրագրի իրականացման այս ժամանակահատվածում՝ փետրվարի 5-7-ը Գյումրիում տեղի ունեցավ նաև գործընկերների 11 ներկայացուցիչների մասնակցությամբ ավարտական գնահատման հանդիպում, որի նպատակն էր ամփոփել ծրագրի արդյունքները, հետհայացք նետել ծրագրի ակնկալիքներին, ուսուցողական կետերին, իրականացման գործընթացին և շարունակականությանը: Գործընկերների կողմից հատկապես շեշտվեց ներգրավված կազմակերպությունների միջև ամրապնդված գործընկերությունը, վստահությունը և նրանց կամքը՝ շարունակելու համագործակցությունը՝ ուղղված երիտասարդների կարողությունների զարգացմանը և ներգրավելուն իրենց համայնքների զարգացման գործընթացներում: Ծրագրի արդյունքում ստեղծված հանրամատչելի և օգտակար ռեսուրսներով հագեցված կայքէջը շարունակում է գործել www.citiesofyouth.yic.am հասցեով, որն արտացոլում է ծրագրի արդյունքները, երիտասարդների բիզնես գաղափարները և ծառայում է որպես ռեսուրս-հարթակ ինչպես երիտասարդական աշխատողների, այնպես էլ երիտասարդների համար:

Ծրագրի արդյունքում ստեղծված հանրամատչելի և օգտակար ռեսուրսներով հագեցված կայքէջը շարունակում է գործել www.citiesofyouth.yic.am հասցեով, որն արտացոլում է ծրագրի արդյունքները, երիտասարդների բիզնես գաղափարները և ծառայում է որպես ռեսուրս-հարթակ ինչպես երիտասարդական աշխատողների, այնպես էլ երիտասարդների համար:

Professional Tourist Guides, Alexan Ter-Minasyan – tourism field expert, Director of Berlin Art Hotel and Honorary Consul of Germany, Brigitte Mehlmauer-Larcher – EU-LEAD4Shirak project team leader at the Austrian Development Agency, and Artur Najaryan – youth field expert and President of YIC NGO.

In the second part of the conference the project participants from all 5 countries had the chance to present 1 business idea per country developed in the result of the project to the invited professional Jury for feedback and advice.

The conference was followed by a final evaluation meeting of the project on February 5-7th in Gyumri with the participation of 11 representatives from partner organisations. The meeting took place in Gyumri and aimed at evaluating the project results, looking back into the expectations, learning points, process, implementation and follow-up of the project.

All partners stressed the strengthened partnership and trust between the involved organisations and their will to continue the cooperation for capacity building and inclusion of young people in development processes of their communities.

The easy navigable and user-friendly website of the project can be accessed at www.citiesofyouth.yic.am which shows the project results, business ideas and serves as a resource platform for both youth workers and youngsters.



«UPSHIFT» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանման ծրագիրը Գավառ և Իջևան խոշորացված համայնքներում

“UPSHIFT” Cultivating Adolescents Growth and Engagement in Community Development programme in Gavar and Ijevan enlarged communities

Երբ. 15 դեկտեմբերի 2021 թ. - 15 հոկտեմբերի 2022 թ.

Որտեղ. Գեղարքունիքի և Տավուշի մարզեր, Հայաստան

Նպատակ. Նպաստել Գավառ և Իջևան խոշորացված համայնքներում 12-18 տարեկան դեռահասների նախաձեռնողականության և քաղաքացիական ակտիվության բարձրացմանը՝ վերջիններիս ներգրավելով իրենց համայնքի կյանքի որակի բարելավմանն ուղղված գործընթացների մեջ:

Նկարագրություն. «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն ՅՈՒՆԻՍԵՖ-ի հայաստանյան գրասենյակի հետ համատեղ Եվրոպական միության աջակցությամբ Գեղարքունիքի և Տավուշի մարզերի Գավառ և Իջևան խոշորացված համայնքներում իրականացրին «UPSHIFT» դեռահասների զարգացման և համայնքային ներգրավվածության խթանման ծրագիրը:

Ծրագրի սկզբում տեղեկատվական և համայնքային կարիքների գնահատման հանդիպումներ անցկացվեցին Գավառ և Իջևան խոշորացված համայնքներում գործող թվով 20 դպրոցներում, քոլեջներում և տարբեր ուսումնական հաստատություններում, որոնց ընթացքում 12-18 տարեկան դեռահասների ներկայացվեցին ծրագրի նպատակներն ու ծրագրին դիմելու կարգը: Այնուհետև հայտարարվեց Գավառ և Իջևան խոշորացված և հարակից համայնքների 12-18 տարեկան երիտասարդների՝ համայնքային խնդիրներ լուծելուն միտված գաղափարների մրցույթ: Ներկայացված համայնքային երիտասարդական ծրագրերի 100 գաղափարներից ընտրվեց 20-ը, որոնք ներկայացնող պատանիները մասնակցեցին «Ծրագրի նախագծում» և «Ծրագրի իրականացում» թեմաներով դասընթացների սովորելով, թե ինչպես գաղափարը վերածել ծրագրի, որը հնարավոր կլինի իրագործել: Երկրորդ փուլում մրցութային հանձնաժողովը 20 ծրագրերից ընտրեց լավագույն 10-ը, որոնք կյանքի կոչելու համար թիմերը ստացան 120.000-ական դրամ ֆինանսական աջակցություն:

When: 15 December 2021 - 15 August 2022

Where: Gegharkunik and Tavush regions, Armenia

Aim: To empower 12-18 years old adolescents in Gavar and Ijevan enlarged communities to be more proactive in practicing civic engagement and in advocating for their rights and positive changes at local and national levels, therefore investing in a more successful future for themselves and their communities.

Description: Gyumri "Youth Initiative Centre " NGO and UNICEF Armenia with the support of the European Union will implement the “UPSHIFT” programme in Gavar and Ijevan enlarged communities in Gegharkunik and Tavush regions.

In the beginning of the project informational meetings were held in 20 institutions of Gavar and Ijevan enlarged and nearby communities for the dissemination of information about the project and recruiting youth. Teenagers aged 12 to 18 took part in informational meetings. Then, a competition for ideas of community projects was announced for young people aged 12-18 in Gavar and Ijevan and nearby communities. Out of 100 community projects 20 were selected and those teams attended training sessions on topics “Project design” and “Project management” learning how to turn the idea into a project that could be implemented. In the second round, the jury selected the top 10 out of 20 projects that received 120,000 AMD to be implemented by teams.

The teams financially supported within the program are:
Ijevan

- “Help in Map”,
- “Ijevastronomy”,
- “Youngest room”,
- “Education-enjoyable and accessible”,
- “A flexible athlete is a durable fighter”.

Gavar

- “GetUp Gavar”,
- “Smart G”,
- “Sport Shift”,
- “Let’s discover Gavar together”,

Ծրագրի կողմից ֆինանսական աջակցություն ստացած թիմերն են՝

Իջևան

- «Help in Map»,
